

ՊԱՅՄԱՆՔ

Յարեկան գին Կ. Պոլսոյ հմր. 10 Մճ.
Ֆառաւոյց . 2 Լիրա
Վեցամս. . Կ. Պոլսոյ . 5 Մճ.
Ֆառաւոյց . 1 Լիրա
Գտար երկիրներու . 50 Պր.
Ծանուցման տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, երկու անգամի հա-
մար 2 դրշ է. աւելի անգամներու
համար զատ ապագայութիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 վարա արծ :



ԼԵԱԳԻԲ

ՀԱՆԱՊԱՋՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ

Դուրս գնացած լրագրաց ճանճա-
ծակը խմբագրութեան վրայ է :
Լրագրոյ վերաբերեալ նամակ
կամ որ և ինչ գրութիւն խմբագրի-
— Տնօրէնին պիտի ուղղուի : Ղալու-
թիա Սանտրոնքլար շատուսի թիւ
198 : Նօրո խան : Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծակը շինարարած նա-
մակ չընդունուիր :
Զտարած նամակ, յօդուած, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿԱՍԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 2 ՅՈՒՆԻՍ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Գաղղիոյ կարեւոր թերթերը կը շա-
րունակեն քննադատել ՂԱՂԱՔԱՆ,
վասն զի Արեւմտեան տէրութեանց
համաձայնութիւնը պահպանելու ե-
ղանակաւ չարտօր, և իւր աշխար-
հավարութիւնն իւր մասնաւոր շահե-
րուն և անգործութեան վրայ կը հիմ-
նէ : Անգղիա թերթաւ իրաւունք ունի
այս ընթացքը բռնելու իբրեւ աւելի
նպատակաւ իւր շահուց : Իւրաքան-
չիւր որ կը յիշէ թէ Մէքսիքա զորք
ղրկելու համար ժամանակաւ Գաղղի-
ոյ ընկերացած էր, բայց իւր նաւե-
րը կէս ճանապարհէն ետ դարձնելով
աւելի շահաւոր ելաւ : Մէքսիքական
քաղաքականութիւնը Գաղղիոյ վրայ
մնաց, և Նաբոլէոն Գ. ի հասն կրած
ձախորդութիւնը շատ մեծ փնտռ-
ւաւ իրեն : Անգղիա խոհեմութիւնը
ձեռքէ չձգեւ, և իւր ծովային գոր-
ծող նախարարը պահպանականաց
մէկ կողմէն մէջ ըսաւ թէ Անգ-
ղիոյ և Գաղղիոյ անհամաձայնութեան
զրոյցները սուտ են, բայց երկու տէ-
րութիւնը զահալվե՞ծ ընթացք չպի-
տի բռնեն : Անգղիա չի ինչնայ բաղ-
ձանքին չգիտակցելով, թէ պէտք արա-
մադիր չէ Յունաստանը պատերազմի
քաջաբերելու : Անգղիա հիւսնական
հողին ընդարձակման նպատակաւ է
և մեծ տէրութեանց հետ համաձայ-
նութեամբ իւր ձեռքէն եկածը պի-
տի ընէ, որպէս զի Յունաստանի արը-
ւի ինչ որ իրեն օգտակար կրնայ լի-
նիլ :

Անգղիոյ նախարարաց այս համա-
ձայնութեան յայտարարութիւնները
Գաղղիական թերթերուն դժգոհու-
թեան չեն համապատասխաներ. եր-
կու տէրութիւնը համաձայն են այն
կէտերուն վրայ, որոյ համար գոր-
ծել պէտք չեն համարիր : Բայց երբ
ձեռնպահութեան աշխարհավարու-
թիւնը թողու օրը գայ, այն ժամա-
նակ պիտի կրնա՞ն համաձայնիլ : ա-
սիկա կասկածելի կը թուի : Մինչ-
դեռ Անգղիա այս վարանմանց մէջ
է, կրտսի թէ ուրիշ մեծ տէրութիւն
մը կը շարժի իւր ազգայնոց իրաւուն-
քն ու շահերը պաշտպանելու, և մին-
չե իսկ զրահաւորներ ճանաչող կը հա-
նէ եղբի : Ուրեմն խնդիր մը կայ որ
կրնայ շփոթութիւններ յարուցանել,
որուն առ այժմ խոհեմութեամբ ա-
ռաջքն առնլու համար մեծ ջանք և
համբերատարութիւն կը դուրսդի,
թէ և աղբու բողոքներ և յանդիմա-
նութիւններ կը լինին :

Գաղղիական թերթ մը ձեռնպահի
կոստանդին նահանգին մէջ ծագած

Արաբական ապստամբութիւնը բոլոր
հիւսիսային Աֆրիկէի մէջ ծաւալեալ
շարժում մը կը համարի եւրոպիոյ և
եւրոպացւոց դէմ, և կը կարծէ թէ
նեղոսի ամբողջութիւնը և ուրիշ կողմեր
քաջաբերելու ունի : Տրիպոլիոյ կող-
մէրէն Շէրիֆ մը թունուզի քանի մը
գիւղերը շրջեր է եղեր կրօնական
պատերազմ քարոզելով քրիստոնէից
դէմ, և յանցաւոր դատելով այն իս-
լամներն որք իրենց կրօնին սկզբուն-
քը թողլով «անհաւատից» հետ հա-
մաձայնութեան կը մտնեն : Այս մա-
լեւանդ խօսքերէն Արաբները գըր-
դըռուելով զենք առած են, և տուրք
վճարել չեն ուզած եղեր թունուզի
պէյին, որ 1200 կանոնաւոր զորք
ղրկել է և ապստամբները դէպ ՚ի
հարաւ քշուեր են պարտութեամբ :
Մարօքի կայսրն ևս Մէքսիքի տալըս-
տամբ ցեղերը պատժելու համար իւր
մայրաքաղաքէն ճանապարհ ելեր է :
Այս դէպքին պատճառաւ Ալժէրի
Գաղղիական դեսպան Պ. Թիւսօ, որ
Մարօքի վրայ մասնաւոր տեղեկու-
թիւն ունի, հոն զրկուած է : Կլօպ
լրագիրը կը կարծէ թէ այս շարժու-
մը Տրիպոլիոյ մէկ ծայրէն կ'սկսի և
մինչև Մարօք կը տարածի : Բայց դու-
ցէ այս կարծիքը չափազանցութիւն
մ'է : Ճէզայիլի կոստանդին նահան-
գին մէջ ծագած յուզումներն անկա-
րելոր էր և չուտով առաջնքն առնուե-
ցաւ : Մայիս 30ին Մուսթֆա Պէն
Պաշտօնի անուն Գայիտ մ'ապանդ-
ւեցաւ և մարմինը կտոր կտոր եղած
էր : Իւր կեղեքումներն Արաբները
զայրացուցած էին, և իւր հրամա-
նաւ ձեռ կերած մարդու մ'որդին
այս վրէժխնդրութեան գործն ըրած
էր : Մերձակայ ցեղի մը Գայիտ ալ
հեծեալներ զրկած էր մալեւանդ-
դրդուի մը ձերբակալելու համար,
բայց իւր մարդիկն սպաննուեցան : Ա-
սոր վրայ Գայիտն և Գաղղիացի պաշ-
տօնատար մը հեծեալներով ապստամ-
բաց վրայ գնացեր էին պատժելու :
Բայց յունիս 2ին գիշերն իրենց վը-
րայ յարձակում լինելով, քանի մը
հոգի սպաննուեցան : հետեւեալ
քանի մը տեղերէ Գաղղիական զորք
ղրկուեցաւ : և թէպէտ ապստամբ
գիւմարութեան կը պատրաստուէին,
բայց խաղաղութիւնը վերահաստա-
տեցաւ : Կը կարծուի որ Գայիտ կոշ-
ւած պաշտօնատարներն իրենց հայ-
րենակիցները կը կեղեքեն, և այն
ատեն մուսուլմաններ կ'ենն անոնց
դէմ ապստամբութիւն քարոզելու :
Իրենց խօսքերն արդէն ժողովրդեան
գժգոհութեանը կը համապատասխա-
նեն, և ձեռնպահիլ ապստամբութիւն
ներն այս տեսակ շարժումներ են
միայն :

Տրիպոնականներէն մայիս 11/23
թուականաւ մայրաքաղաքին լէվընթ

Հէրըլտ լրագիրն ուղղեալ նամակ մը
հետեւեալ տեղեկութիւնները կուտայ.

« Անգղիական կառավարութիւնն
յունիս 4ի պայմանագրութեամբ ֆո-
քըր—Սիւրոյ վրայ ստանձնած պաշտ-
պանութիւնը գործադրել կ'սկսի » Հա-
յաստանի գլխաւոր քաղաքաց մէջ
հիւստոտութիւններ հաստատելով :
Անգղիացի Պ. Հէնրի Թրօթթըր հա-
ղարարեան, որ մեծ արժանեաց տէր
սպայ մ'է, Գիւրտտանայ հիւպա-
տոս կարգուեցաւ, և Տիւրքիքի
պիտի նստի : ֆոլս հիւպատոս տիտ-
ղոսով ուրիշ սպայ մ'օգնական տըր-
ւած է անոր : Գիւրտտանայ Անգղիա-
կան հիւպատոսին իրաւասութեանը
ներքե են կարնոյ, վանայ և Տիգրա-
նական նահանգներն և Գար—Բեր-
դի դաւառը » :

Պ. Հէնրի Թրօթթըր մայիս 4/16ին
Տրիպոնականներէն կարնի դնաց կայ-
սերական ֆօլիսէր Եոսուֆ Իսալի
և Սարգիս Էֆէնտիլի քով, որովհետեւ
Կ. Պոլսոյ Անգղիական դեսպանէն ա-
ռած հրամանին համաձայն, բարե-
նորոգմանց ճրագրերուն գործադ-
րութեան հսկելու համար կէս պաշ-
տօնական կերպիւ կայսերական ֆո-
միսէրներուն պիտի աշխատակցի :

Սերաստիլոյ մէջ պատրաստութիւնը
կը լինին Անգղիացի Պ. Ուիլսոն հա-
ղարարեան ընդունելու համար, որ
Սնատուրի մէջ հաստատուելիք հիւ-
պատոսաց և փոխ-հիւպատոսաց դը-
լուսը պիտի լինի : Բայց Գիւրտտա-
նայ հիւպատոսն անկախ պիտի լինի,
և Կ. Պոլսոյ դեսպանատան իրաւա-
սութեան ներքե պիտի դառնուի » Ի
բաց առեալ զինուորական գործերն,
որք Ուիլսոն հաղարարեալն իրաւա-
սութեան ենթարկեալ են :

Բայց փոքր Սիւրոյ մէջ միայն Անգ-
ղիացիք չեն հիւպատոսութիւններ
հաստատող : Ռուսիա ալ նոյն բանը
կ'ընէ, և ամենէն առաջ Տիգրա-
նական մէջ առաջին կարգի հիւ-
պատոսութիւն մը հաստատուած է :
Ռուսական նոր հիւպատոս Պ. Եաքի-
մանսքի մայիս 4ին Տիգրանական
հասաւ : քաղաքին Հայոց առաջնորդ-
Գեր. ֆիլիպպոս արքեպիսկոպոսն և
Յունական կղերը տան և հինգ հազար
հոգիէ աւելի բաղմութեամբ Ռու-
սական հիւպատոսը գլխաւորելու գը-
նացին մինչև 2 ժամու տեղ : Հայոց
արքեպիսկոպոսն եկեղեցական զգես-
տուք հիւպատոսին առջին երթա-
լով, արժաթեայ պնակի մը մէջ աղ-
և հայ մատոյց ըստ Ռուսական սո-
վորութեան : Պ. Եաքիմանսքի ան-
միջապէս ձիւն վար լինելով՝ ծռնկի
վրայ եկաւ, երեք անգամ երկընդա-
մար ընդունաւ :

Ստոնը Հայաստանի գաւառներ լի-
նելով, Գիւրտտան անունին ներքե կը
ներն անտեղի է :

գեց և յետոյ ոտքի վրայ ելնելով հա-
ցը կտրեց և ալին մէջ թաթխելով
բերանը տարաւ : Նոյն միջոցին ֆիլիպ-
պոս Սրբազան ալ համառօտ արգիթ մը
կ'ընէր Ռուսական լեղուով : Լէվընթ
Հէրըլտի թղթակիցն Հայոց առաջ-
նորդին այս ընթացքին վրայ դար-
մանք կը յայտնէ, բայց իբր բացատը-
րութիւն կըսէ թէ Գիլիպպոս արքե-
պիսկոպոս Ռուսիացի է, որովհետեւ
Ռուսիոյ Պաքու քաղաքը ձնած է :
ֆիլիպպոս Սրբազան քաղաքին մէջ
յատուկ տուն մը պատրաստած էր
Ռուսական հիւպատոսին համար, և
թէպէտ տեղական կառավարութիւնն
ալ երկու տեղ բնակարան պատրաս-
տած էր, այսու ամենայնիւ Ռուսա-
կան հիւպատոսն Հայոց առաջնորդին
պատրաստած բնակարանն ընտրեց :

Արեւելեան Ռուսիոյ Եւրոպական
յանձնախմբին Անգղիական առաջին
պատուիրակ Սըր Հէնրի Ուօլֆ ֆիլի-
պէն մեկնելէ առաջ, տեղւոյն բո-
լոր հասարակութեանց քաղաքային
և կրօնական տարերոց կողմանէ պատ-
գաւաւորութիւններ ընդունեց, որք
գաւառին համար իւր ըրած ծառա-
յութիւններէն շնորհակալութիւն
յայտնելու եկած էին : Հասարակու-
թեան գլուխներն ընդ որս նաեւ Պուլ-
զարաց մետրապոլիտը՝ Սըր Տրեմ-
միւնս Ուօլֆի պաշտօնավարութեան
միջոցին բռնած կարուկ և անկողմ
նակալ ընթացքէն իրենց քաղաք-
օգուաններուն համար խորին շնորհա-
կալութիւն յայտնեցին : Պուլզար մետ-
րապոլիտը խոստացաւ իւր բոլոր ազ-
դեցութիւնն ՚ի գործ գնել ժողովրդ-
դային զգացումը նոր վարչութեան
արժանի գիրքի մը մէջ բռնելու հա-
մար, և նահանգին այլ և այլ ցեղե-
րուն հաշտութեան աշխատիլ :

ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԼՈՒՐՆԵՐ

Բեղրադուրի 15 յունիս
Կէս պաշտօնական Ամսան Ռիւս լը-
րագիրն իւր այս աւուր թուոյն մէջ սուտ
կը հանէ այն տարածուած զրոյցը թէ
Թուրքիոյ և Ռուսիոյ միջև մօտերս յարա-
բերութեաց ցրտութիւն մը գոյացեր է :

Բեղրադուրի 12 յունիս
Ռուսական կառավարութիւնն Եգիպ-
տական պարտուց նկատմամբ Գոհիթի
մէջ Գերմանիոյ յայտնած տեսութեանց
հաւանութիւն տալ որոյց : (Աւստրիա և
Իտալիա արդէն հաւանութիւն տուած
էին :)

Ինտար 13 յունիս
Տէյի Թէլէկրաֆ լրագիրն իւր այս
աւուր թուով կը ծանուցանէ թէ Գեր-
մանիա Եգիպտական խնդրոյն և Թուրքի-
ձեռք տաւ միջոցներուն վրայ իւր տե-
սութիւնները Գրան հաղորդեց է և թէ
Գրան ալ հաճեր է Գերմանիոյ տեսու-
թեանց սկզբունքը պաշտպանել Գահե-
րէի մէջ :

Նոյն լրագիրը կաւելցնէ թէ միւս մեծ տէրութեանց Կ. Պոլսոյ դեսպան Է. Էրն ալ Գերմանական դեսպան Հայցիկտ կամին հրահանգաց նման հրահանգներ տեսցած են այս մասին :

Աթէնք 12 յունիս.
Յունաստան մեծ տէրութեանց Աթէնք քի գեապոններուն ծանոց թէ սահմանադրութեան մասին վրայ Գրան հետ բանակցելու համար պատուիրակներ անւանելու կը համար, սակայն կը պնդէ որ Անհամադրութիւն որոշած դիմը բանակցութեանց հիմ լինի :

Այս ամսուր հասած հետքեր
Լոնտոն 13 յունիս.

Ներսիսիոսեան ժողովն երկրորդ քննարկմամբ քուէարկեց Հնդկաստանի համար 5 միլիոն Անգլիական ոսկոյ փոխառութեան առաջարկութիւնը: Պատկէն պէրկի իշխանը Գերմանիոյ մէջ իւր ընտանեաց անդամներն տալէ ետեւ Հռոմ պիտի երթայ և Պրիստիգիէն չորեքշաբթի փոխի նստի Կ. Պոլսոյ երթալու համար, ուր երեք օր պիտի կենայ :

Պրիստիգի թագաւորը նոր կտորածներ հրամայեց :

Աթէնք 13 յունիս.
Հորնայի ծովապետին հրամանատարութեան ներքեւ դաշնուող նաւախումբը յունիս 19ին Պիրէոսէն պիտի մեկնի Միլո և անտի Հստոս երթալու համար, ուր ամսոյս վերջը կը հասնի :

Հանեայէն յուր կուտան թէ Ռէթիօնի նահանգին շուր գաւառաց բնակիչներն Անգլիոյ հիւսարտու Պ. Ստիտուիթի յայտարարութիւն մ'ուղղած են ըսելով թէ Կապոյտ տեսարանին մէջ հրատարակեալ իւր խօսքերը սխալ են. թէ Կիւրտի ժողովրդեան բաղձանքներն 1821 էն ի վեր յայտնի են և թէ երբեք միտք չեն ունեցած իրենց ազգութիւնը փոխելու :

Համ 15 յունիս.
Ար հաստատեն թէ կառավարութիւնն Յունաստանի ընդարձակումն առաջարկեց Է. Թեսալոյ մէջ, և թէ տէրութիւնը ումանք հաւանութիւն տուեր են այս առաջարկութեան, ամենք ալ կը վարանին :

Լոնտոն 13 յունիս.

Կոն. քան.	12
Փոյս.	1863 13 1/1
"	1869 14 3/8
"	1871 50 1/4
"	1872 21 1/2
"	1873 43 1/2
Այլ իւր.	63 7/8
Անգլ. քան.	97 1/1

Փարիզ 13 յունիս.

Կոն. քան.	12, 2 1/2
Փող. քան.	30 / 0 82, 80
"	" " 83, 5
"	" " 30 / 0 116, 70

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վեհ. Սուլթանն հեռագրու իւր ցաւակցութիւնն յայտնեց Հոլանտիոյ Թագաւորին՝ անոր անդրանիկ որդւոյն մահուան առթիւ :

Հոլանտիոյ Թագաւորն երէկ պատասխանեց Վեհ. Սուլթանին :

Արեւելեան Բուսիլի ընդհանուր կառավարիչ Ալէք. փաշան Օսմանեան հեռագրատանց գլխաւոր պաշտօնատարներէն Մարքիտէն Էֆէն. անին ֆիլիպէ կոչեց Արեւելեան Բուսիլի հեռագրատուներն և թողութատարութիւնները կազմելու համար :

Ելեմոից բարեքման յանձնախմբին շինած պիւտեթիւն մէջ, որ նախարարայ խորհրդին քննութեան ենթարկեալ է, ոստիկանութեան նախարարութեան ծախքը չափաւորւելով կէսի իջած է :

Բ. Գուռն ոստիկանութեան նախարարին հրամանագիր մ'ուղղելով անհրաժեշտ եղած պաշտօնատարաց մէկ ճիշդ յանկն և պաշտօնէ դադարեցնել կարելի եղած պաշտօնատարաց անունները կը պահանջէ, պատահելով՝ միանգամայն որ թէ պաշտ

տօնատարներ դադարեցնելով, թէ ամառականները քննելով, և թէ պաշտօնատարին ծախքերը նաեւ պահելով կարելի եղած խնայութիւնները նշանակէ, որպէս զի նախարարայ խորհուրդը կարենայ որոշում մ'ընել :

Ոստիկանութեան նախարարութիւնն ալ իւր կողմէ գաւառաց ոստիկանութեան գլխաւորուն հեռագիր քաշելով՝ գլխաւոր ուղած է թէ կարելի է որդեօք այն օրինակ խնայողութիւններ ընել առանց ոստիկանութեան գործը խանգարելու և երեք օր պաշտօնատարութեան մասին պատասխանելու :

Սակայն այժմէն քանի մը նահանգաց ոստիկանութեան գլխաւորն խնայողութեան ծրագրերուն անհրաժեշտ պատասխաններ չըրկած են : Ի մէջ այլոց՝ Տրապիզոնէն հեռագիր եկած է թէ ոչ միայն ոստիկանութեան յատկացեալ գումարը նուազեցնել անհնար է, այլ ընդհակառակն պէտք է աւելցնել, որովհետեւ նահանգին ոստիկաններն աւագակաց դիմադրելու բաւական չեն :

Ուրիշ քանի մը նահանգներէ ալ այն օրինակ պատասխաններ եկած են :

Բեդրասպուրիի Հելլենական դեսպան Պ. Պրայա Արմէնիս, որ Յունաստանի սահմանագլխոյ խնդրոյն համար երկրորդ պատուիրակ անուանեցաւ, յառաջիկայ հինգշաբթի օրը մայրաքաղաք կապաուի : Կը կարծուի թէ Թուրքիոյ և Յունաստանի պատուիրակներն յառաջիկայ շաբաթ օրն առաջին նիստը պիտի ընեն : Բ. Գուռն տակաւին իւր պատուիրակները չեն անուանած, բայց ընդհանրապէս կը կարծուի թէ ինչպէր զիստադիտական մասին համար Ալէքսանդր Գարաթէստորի փաշան և Կոստանդ փաշան պատուիրակ պիտի կարգուին :

Պէօլիւք տէրէի Ռուսական դեսպանատան աւելի Ռուսաց զինուորական նաւագաւծութիւնը դադարեցաւ Լոսանօֆ իշխանին հրամանաւ, և նրա գաւառաց խումբն ալ յատուկ շուգենաւով երէկ Ռուսիա ղրկուեցաւ Սև ծովու ճանրով :

Լրագրոյս չորեքշաբթի առուր թուով Գարաթէստորի կամուրջին գլուխը Հ. Բ. Էֆէնտիի կառուցած շէնքին մէջ աշխատող Գիւրտերուն կողմանէ Հայ բեռնակրաց վրայ եղած գաղանակն կատարել յարձակումը պատմելով, ցաւ և զայրոյթ յայտնած էինք որ «Հայագրւոյ մը կառուցած շէնքին մէջ բանող Գիւրտերէ ալ յարձակում և հարուած կը կրեն խեղճ անմեղ Հայեր» :

Թէրքմանը Էֆ. քեար լրագիրն իւր երէկուան թուոյն մէջ մեր այս խօսքը քննադատել ուղղելով, կը կարծէ թէ մեր շէնքին տէրն եղող Հաւաճեան Բարսեղ Էֆէնտին ամբաստանած եմք այնպիսի գործի մը մէջ, ուր՝ ըստ յիշեալ լրագրոյ տեղեկութեան՝ յանցաւորք նոյն իսկ բեռնակիրներն են եղեր :

Իրաւ է որ Թէրքմանը Էֆ. քեար Հայերէն լեզուով չգրուի, բայց մեք իրաւունք ունենք կարծելու թէ անոր խմբագիրներն Հայերէն լեզուն լաւ կը հասկնան: Սակայն կերելի որ սխալած եմք, որովհետեւ մեր վերջգրեալ տողերը կարգացող ամեն Հայագրէս կը հասկնայ թէ մեք պարզապէս զարմանք և ցաւ յայտնած եմք այս տխուր իրողութեան համար թէ նոյն իսկ Հայոս մը շէնքին մէջ աշխատող և անոր ստակը վատակող

Գիւրտեր նոյն շէնքին մէջ Հայերը կը հարուածեն. ուստի չեմք հասկնար թէ Թէրքմանը Էֆ. քեար ուրիշ առած է իւր քաշկաւառի մեկնութիւններն, որք ներսի մեղ ըսել՝ շարքորթութեան ձև ալ կառնուն :

Գալով յանցանքին բեռնակրաց քով լինելու առարկութեան, որով Թէրքմանը Էֆ. քեար Գիւրտերուն գաղանակն գործն արգարացնելու երեւոյթ ունի մեր պաշտօնակիցը բուրսիին կը մխալի : Հայ բեռնակրաց յանցանք չունենալն և ընդհակառակն Գիւրտերուն յանցաւորութիւնը կը հաստատեն տեղւոյն պահուկանոցին հարկւրապետին տեղեկագիրն և բոլոր շրջակայ սեղանաւորաց և խոնարհ պանաց վկայութիւններն, որոց ճշդիւ համաձայն են նաեւ երէկ իրիկուն Լէվրնթ Հէրըրի հրատարակած տեղեկութիւնները :

Փափաքելի էր որ Թէրքմանը Էֆ. քեար՝ փոխանակ բարբարոս Գիւրտերուն իրաւունք տալու, իրողութիւնն արժանահաւաս աղբիւրէ ստուգելով, հարուածեալ խեղճ Հայ բեռնակրաց արդարութիւնը պաշտպանէր. որք այնպիսի յարձակման մ'առելի տուող բան մը չէին ըրած :

Հինգշաբթի իրիկուն Սիրքէճի իսկէնքանի Թուրք տան մը Տաճիկ կառապանը նոյն տան տակը դըրած մափխութիւն ընող գաղթական գեղադէմ Հրէայ պատանին մը ներս կը կը տանի ըսելով թէ տիկինը դրամ պիտի փոխէ, և խեղճ պատանին ախոռը մտցնելով իւր գաղանակն կը կրնայ յաղեցնել կողմէ : Պատանին սաստիկ կ'ընդդիմանայ, բայց բարբարոս կառապանը զայն քանի մը տեղերէն վերադարձնէ ետեւ՝ վերջապէս գ. Թաղը պատանոյն գլուխը կը կտրէ և դիակը յարդանոցին մէջ ծալլը կը թաղէ : Բայց տխուրն մէջ ծագած ազմուկը լսուելով ոստիկաններ կը հասնին, և թէպէտ ոճրագործն առջի բերան ամեն ինչ կուրանայ, բայց յետոյ պատանոյն գլխին երեան ելնելով ոճիրը կը խոտաովանի :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ԷՍԶԱՄԸՈՒՄՈՒՄՈՒՄՈՒՄ	
Երէկ իրիկուն գոցուեցաւ	43, 7
Այս առաւօտ բացուեցաւ	43, 4
Կէս օրին	43, 7
Բուսիլի երկաթուղի	Քր. 48,
Թղթադրամ	Իր. 1130

ԸՆԹԱՅՔ ԱՐԺԵԹՊՈՅ

1 Յունիս

Սօսի թէ Եֆէնտիի բաժ. Անգլ. Իր. Կ.	
• Գիւրտերուն կողմէ	3, 18
Կ. Պոլսոյ Պատեքային	6, 15
Քրէտի Եֆէնտի	4, 15
Փոյս. 1863	Յր. 72
• 1865	• 69
• 1869	• 21
• 1872	• 61
• 1873	• 2 60

ԸՆԹԱՅՔ ԳՐԻՍՏՈՅ

2 Յունիս

Անգլ. Իր.	409 42
Նարոյնի ոսկի	87 44
Խմելու Ռուս	90 2
Գլորիոյ	51 20
Մէճիտիկ տարեբերութիւն	6 42
Մէճիտիկ	14 40
Պղինձ	478

Ա. Զ. Գ. Ս. Յ. Ի. Ն.

Երէկ Աղգային ժողովը գումարեցաւ ընդ նախագահութեամբ փոխանորդ սրբազանի և տոնեապետութեամբ Մեծ. Տ. Կոստանի և Գիւրտերի :

Նախընթաց նստին առնանալով թիւեր վաւերանալէ ետեւ, Ալէքսանդրը Մէրքէմ-Գուլի Էֆէնտիին մէկ նամակը կարգացուեցաւ, որ իւր ծանր դրացմունքը պատճառ բերուն իրով հրաժարական կուտար երեսփոխանութենէ : Ժողովն ընդունեց հրաժարականը :

Յետոյ Գարեբրդի գաւառական ժողովին մէկ տեղեկագիրը կարգացուեցաւ, որ կը ծանուցանէր թէ Լըբաքոյ խմբագիր Թիւլպէնտեան Նիկոլայ Էֆէնտին աղգային երեսփոխան ընտրուած էր յիշեալ գաւառին կողմէ : Թիւլպէնտեան Էֆէնտին ալ ընդունած էր ընտրութիւնը : Սակայն երեսփոխանաց ումանց դիտողութեան վրայ թէ Թիւլպէնտեան Էֆէնտի անցեալներն իւր լրագրին մէջ զլրգային երեսփոխանութիւնն և այլ բազում խնամանք ըրած, ժողովը չլուրջացուց անոր ընտրութիւնն, հետեւեալ Թիւլպէնտեան Էֆէնտի մերժուեցաւ երեսփոխանութենէ :

Յետոյ Ա. Ատենապետ Վահմ. Գ. Օտեան Էֆէնտիի հրաժարման խնդիրը ներկայանալով, Օտեան Էֆէնտիի տուած բերանացի բացատրութեանց վրայ հրաժարական ընդունուեցաւ, և անմիջապէս քուէարկութեան ձեռնարկուելով, Վահմ. ըմտեփան փաշան առաջին առնանալէտ ընտրուեցաւ քուէից բացարձակ առաւելութեամբ :

Ն. Վահմութիւնը մեծ դժուարութեամբ ընդունեց իւր վրայ եղած ընտրութիւնն :

Ժողովն օրակարգին անցնելով, կեդր. անտուկին ներկայ 79-80 տարեոյն ելմանցոյցն յօդուած առ յօդուած վիճարկութեան դրուեցաւ, և ծախուց վերադրեալ յօդուածները թեթեւ բարեփոխութեամբ ընդունուեցան :

Ի վերջոյ Պատրիարքական փոխանորդութեան խնդրոյն վիճակին վրայ քանի մ'երեսփոխանաց կողմէ դրաւոր հարցում մ'ուղղուելով խորհրդարանական յանձնարարին Յ. Մէրքէմ-Գուլի Էֆէնտին յայտնեց յանձնարարին կողմէն թէ տակը տեղեկութիւնը պայմանաւոր էր : Ժողովն հասկնալով որ բացորոշ տեղեկութիւն մը չստիպի կրնար ստանալ, հարցումն օրաճգնու որոշում տուաւ, և ժամ 40ին ամենը գոյուեցաւ երեք շաբաթէն գումարուելու որոշմամբ :


Նիկոմիդիոյ դաւառէն և մասնաւորապէս Ատարազարէն առնուած տեղեկութիւնը խիստ տխուր են :

Ատարազարի մէջ և շրջակայ գեղերը 40-000 Թուրք, 7-000 Քրիստոնեայ, իսկ 45-000 Չէրքէս կը բնակին որք ըստ սովորութեան յոսից ցղըլու զինեալ են : Ասոնք ճանաչանքը բռնած և գաւառին հարկւրաւոր գեղերուն հետ Ատարազարի քաղաքին բնակչաց յարարելութիւնները կարած են : Քաղաքէն դուրս ելնելու զորքերը կը կողոպտեն, կ'սպաննեն, այնպէս որ Ատարազարի խեղճ բնակիչները գրեթէ պաշարեալ են : Մինչև մօտ ժամանակներս Չէրքէսք իրենց չարագործութիւնները քաղաքէն դուրս կ'ընեն իսկ ժամանակէ մ'ի վեր նոյն իսկ քաղաքին մէջ անոնց յանդուդն չորագործութիւններն անպակաս են : Վերջապէս գաւառին մէջ ամեն կողմ ահ և սարսափ կը տիրէ և տեղորդ. և ըսել թէ տոնեապետն գործերն ալ գրեթէ բոլորովին դադարած են :

Այս անտանկի վիճակին չորեք կողմից Գիւրտերը : Ատարազարի Հայ

Յոյն և Տաճիկ հասարակութիւններն հանրագիր մ'ստորագրած և Նիկիոսի միջոցով առաջարկական վիճակները Գեր. Ստեփան վարդապետին յանձնած են որ այս դործին համար երէկ Կ. Պոլիս եկած է Երեւոյ երեք հասարակութիւնք կը խնդրեն Բ. Դրնէն որ իրենց դասն վիճակը նկատողութեան առնելով՝ անյայտագր դարման տնօրինէ ։ Սոյն հանրագրին հետ՝ վերջին օրերս Չէրքէններուն դործած չարագործութեանց երկայն ցումը մը կայ ։ որ 200էն աւելի աւազակութեանց ։ սպանութեանց և ուրիշ ռմբակործութեանց դէպքեր կը պարունակէ ։

Գեր. Ստեփան վարդապետ երէկ Յունաց արքայան պատրիարքին երթալով, Աստաղարի Յոյն ժողովրդեան կողմէ առ Յունաց պատարքարանն ուղղուած գրութիւնները Ն. Սրբապետութեան ներկայացուց ։ և խորհրդակցութեամբ որոշուեցաւ որ Գեր. Ստեփան վարդապետ այսօր Հայոց Յունաց և Բողոքականաց Գաւառքէհասակներուն հետ Մեծ-Եպարքոսին երթայ և Աստաղարի և չորքուկայ գիւղերէն բովանդակ ժողովրդաց խնդրուածքը Ն. Բարձրութեան ներկայացնէ ։



Իսկիւտարու Աղդանուէր Հայուհեաց ընկերութիւնը շնորհակալութեան ուղերձ մը Ս. Պատրիարքին մատուցած և իւր օրհնութիւնը խնդրած լինելով Ն. Սրբապետութիւնն ալ հետեւեալ պատասխանը գրած է ։

ԱՍՏԱՐԱՐԱՐԱՐ ԲԱՐՈՒՆԻՍ
ԱՅԳԱՆՈՒՄԻ ՀԱՅՈՒՆԵԱՅ

Ձեզն շնորհակալի զիւր ընկալեալ ուրախ եղէ յոյժ ընդ միաբանակցութիւնդ ի դրախտ Հայրենեաց վասն բարդ աւանդան դաստիարակութեան ի համառօտ և համարիւն Ձեր դըստերու Հայատանի ։ Իցիւ թէ օրինակը Ձեր զհետ Ձեր ձգէին զամենեւին զՏիկնայ և զՕրիորդս աղգիւ և վաստակ կարեւոր և դաշտ քրտանց և ասպարէզ առաքինութեան իրար զՁեզ ընտրէին և նոքա զիրթութիւնը Հայկազն մանկաւոյն ։

Մաղթեմ ի Տեառնէ օգնական լինիլ Ձեզ և քաջալեր ։ զՀոգիւսիւնեանց սրբուհեաց շնորհել Ձեզ բուրաբեղուն արգասիս ։ օրհնել զքրտունս Ձեր ։ և Դուք ամենեւեմն զօրացեալ Տէրամբ և Հոգի շնորհաց ընդ Ձեզ՝ փայլեալի իրար դաստիարակ ։ և զիւր իրար ծաղիկ անթառամ մեր Հայրենեաց ։ զգրաւոր նախնեաց Ձերոց գեղաշէջ զարդարելով ի միմիարութիւն Հայոց և իմ ։

1879 մայիս 30 Աղծարար Ձեր
Պէյքօզ Ն. Ե.

ԲԱՆԻ ՄԸ ԴԻՏՈՂՈՒԹԻՒՆԻ

... Խմբագրապետ Տէր.

Ներդէք որ ձեր պատասխան լրագրին միջոցաւ սիրելի աղգայնացս ուղարկութիւնն հրաւիրեմ իմ քանի մը գիտողութեանցս վրայ ։ որք որք և մէկ քանին ալ յաճախ լուծած բաներ լինելով հանդերձ ։ ոչինչ նշանազ կարեւորութիւն ունին թէ՛ աղգային և թէ՛ բարոյական տեսակետով ։

Շատերուն հետ ես ալ կը գիտեմ թէ մինչդեռ մեր՝ մանաւանդ Կ. Պոլիս բնակող աղգայնաց մեծ մասին մէջ մանաւոր ջանք մը կայ Եւրոպացացոց նմանելու՝ անոնց հապուստին ։ կերակրին և զրօսանայ մասին ։ շատ քիչեր հոգ կրնին Եւրոպացիներն իրենց օրինակ ընել աւել բարձր

բաներու մէջ ։ Այսպէս ։ յաճախ կը տեսնենք Հայ երիտասարդներ և օրիորդներ ։ որք Եւրոպական կապիկի պէս կ'օրինակեն Եւրոպացին ։ բայց ամենեւին հոգ չեն ընել այն գիտնական և գրական ծանօթութեանց գէթ մէկ մասն ստանալ ։ ուրիշ կը պարծին Եւրոպացիք ։ և որք յօժար կամօք և ստիպարար կ'ընդունին Եւրոպացոյն գեղծութիւններ ։ բայց անտարբեր են այն առաքինութեանց որք մեծ մարդեր յառաջ բերած են Եւրոպայի մէջ ։ և երբ Անգղիացոյն Սթիւարթսն կամ Գաղղիացոյն Գալտիէ հազնին ։ բնաւ միտք չեն բերել թէ ինքնօգնութիւնն և աշխատասիրութիւնն Անգղիացոց մէկ մէկ ընտանի յատկութիւններն են ։ որոց շնորհիւ թէ՛ անհատաբար և թէ՛ աղգային կը յառաջանան ։ և թէ Գաղղիացին անընկճելի աղգասիրութիւն մ'ունի ։ որ ամեն զոհոգութիւն ընել կուտայ իրեն յօգուտ աղգին և հայրենեաց ։ Ինչո՞ւ այսպէս կրնանք ։ իրաւ է որ աւելի դիւրին է Եւրոպացոյն նմանիլ իւր կապիկ ։ քան իւր բնական ուր ։ բայց այս վերջինն աւելի օգտակար ։ և վերջապէս աւելի վայելուչ է ։

Նոյնպէս ։ մանաւանդ Կ. Պոլսոյ մէջ ։ որ դաւառաց համար լուսաւորութեան կեդրոն լինելու պաշտօնն ունի ։ ամեն հասակի բազմաթիւ աղգայինք թէ Լուսաւորչական և թէ Հռոմէական ։ որք վայելուչ հայրենի մը կրնան խօսիլ ։ նախապատիւ կը համարին օտար լեզուներ և մանաւանդ Թուրքերէն և Յունարէն խօսիլ ։ Ձրօսանայ ժամերու մէջ ալ շատ Հայեր նախապատիւ կը համարին Թուրքական և Յունական երգեր երգել քան թէ Հայկական ։ Այսպէս կրնան Եւրոպացիք ։ զորս մեզ օրինակ կառնուածք ուրիշ շատ բաներու մէջ ։ Եւ միթէ ։ ամեն բանէ առաջ աղգային նախանձախնդրութիւնը պէ՞տք է թող տայ այսպիսի դատապարտելի անհոգութիւն մը ։

Ուրիշ սովորութիւն մ'ալ ունինք ։ զոր որչափ դատապարտեմք քիչ է ։ Մեր աղգայնոց վրայ ։ միւսանց նկատմամբ այն մասնաւոր համարութիւնն ու անկողնու փոյթը չեմ տեսնել ։ զոր դիւրին է Եւրոպացոց և նոյն իսկ Թուրքիոյ Յունաց ։ Հրէից և Տաճիկաց վրայ նշմարել իրենց աղգակցաց նկատմամբ ։ Երբ Հայ մը ծեծեն և ու է կերպիւ զրկանք լինի Հայու մը ։ ոչ միայն իւր աղգակցը չեն օգնել անոր ։ այլ մինչև անգամ ևս մասնութիւն կրնան ։ Միթէ մեր ճակատագիրն է որ թէ մեծ և թէ փոքր գործոց մէջ՝ մեր անմիտութեան իրաւունքը կ'որոշուի մեր դատար ։ Եթէ իրաւ է որ պատմութիւնն չը խրատուող ժողովուրդներն յառաջ չեն կրնար երթալ ։ ինչ պիտի լինի մեր վախճանն այս անմիտութեան և անհոգութեամբ ։ Պէտք չէ՞ օրինակ առնուիլ Յոյներէն ։ որք հնութեան մէջ որչափ բաժանեալ էին ։ այժմ նոյնքան կը սիրեն միութիւնն ։ և հետեւաբար նոյնքան աւելի կը յառաջանան և իրենց աղգային դոյնութիւնը կ'ամրապնդեն ։ Պէտք չէ՞ օրինակ առնուիլ Եւրոպացիներէն ։ որոց հապուստը կը հազնիւր ։ լեզուն կ'ունենան և զեղծութիւնները կ'օրինակեն ։ և որք սակայն իրենց նշմարեան ըրած են այս երկոյ օրհնեալ խօսքը թէ՛ «Պար միութիւն ։ հոն դրութիւն» ։

Այս ընդհանուր դիտողութիւններէն յետոյ կուգեմ մասնաւոր դիտողութիւն մ'ընել ։ — Կը գիտեմ թէ մինչդեռ դաւառներն իրական սեռին դատախարակութեան նպատակը համար իսկիւտարի մէջ Հայ

օրիորդք ընկերութիւն մը կը կազմեն « Հայուհեաց աղգանոց » ընկերութիւնն անուամբ ։ և անդու կաշխատին այդ վեհմ'ապատակին համար ։ Իսկիւտարի բազմաՀայ թագրուէն Հայ երիտասարդութիւնը սոյն օրինակ աղգասիրտին դործ մը չէ ըրած տակաւին ։ Աւելորդ է ծանրանալ այս պակասութեան վրայ ։ որ թէպէտ յոյժ ցաւալի ։ միանգամայն դաւանանքի է ։ Հայ երիտասարդութիւնն աշխատութեան համար մեծ ասպարէզ մ'ունի իւր առջև ։ Հայաստանի գեղեցիկն աղիողորմ ձայները կը լսուի իւր լուսաւորութեան հաւքը կը խնդրեն ։ Պէտք չէ ծածկել ։ աղգը կը զարթնու ։ իւր պէտքերը կը ճանչն ։ բայց այդ պէտքերը դու հայրենու միջոցները կը պահին Գաւառս Հայ երիտասարդութեան ամեն նամեծ պարտքն է ջանալ որ այդ միջոցներն հայթայթուին աղգին ։ և կը յառաջ թէ իմ այս քանի մը տեղերս քաջալեր կը լինին իսկիւտարի Հայ երիտասարդութեան ։ որ աղգային վերածնութեան վեհմ'գործին մէջ իւր բաժնին ինկած մասն յօժար սրտիւ կատարելու վտանգը ընկերութիւն մը հաստատելով ։ որ նպատակ ունենայ Հայաստանի որ և է դաւառին մէջ կը լսուի ծաւալումը ։

Աղգին վիճակին վրայ խորհելով ։ անհնար է բազմաթիւ թերութիւններ չգտնել մեր վրայ ։ ևս անոնց մի քանին նշանակեցի այս նամակիս մէջ յառաջով որ անօգուտ աշխատութիւն մը չեմ ըրած ։ և եթէ Մասիսի հարկըստ որ ընթերցողաց մէջն միայն քանի մ'անձինք նկատողութեան տունն այդ կէտերն ։ ևս զիս վարձատրուած կը համարիմ ։

Գիտու աշխատի

... Խմբագիր Տէր .

Ի պատասխանի « Լրագրոց » մայիս 31 թուականով թերթին մէջ հրատարակեալ Ռ. Աթանասեան և Գ. Պատմաճեան ստորագրութեամբ նամակին ։ կը խնդրեմ Ձեր արդարաթիրութենէն երկողիս անանկին մը շնորհել Ձեր պատասխան լրագրին մէջ ։

Այո՛ ։ ինչպիսի որ յայտարարեցի Ուսումնական խորհրդոյ տուած բողոքադրոյ մէջ կը յայտարարեմ համայն աշխարհի թէ իմանալով որ վերայիւեալ անձերէն երկողից յանդիման զիս աշխատութեանցս առջև ինչո՞ւ հաւանք Տէր ՈՐՈՄԵՍ կարգապատկերէ ։ իմանալով կըսեմ իմ անձիս դէմ գործուած այս ԱՆԼՈՒՐ անարդանքը՝ որում բնաւ արտահայտած չէի ։ ևս որ քան տարիէ ի վեր իմ փառանքը ծառայեմ աղգին ։ լցայ բարեկեցութեամբ ։ դնացի յիշեալ վարժարանաց խորհրդարանը՝ ուր էին այդ երկու ձողարարները ։ և խօսքս ուղղելով առ այն որ գիտնականութեան էր ։ հարցուցի թէ արդարեւ այդպիսի անարդական խօսք մ'ըսած է ինձ համար ։ և երբ ինձ պատասխանեց թէ « մէյ մ'ալ ըսած ըլլամ ։ ինչ պիտի ընես » է՛հ ։ անտեսն այլ ևս չկրցայ ինքզինքս զայիլ և ինչ որ կը վայելէր ըսի իրեն * ։ Պէտք էր որ ես քաջ շինուած մարդ մ'ըլլայի ։ պէտք էր որ պատուոյ զգացում չունենայի ։ պէտք էր որ երակներուս մէջ արիւն չսնուցանէի ։ պէտք էր որ վերջապէս զիսի մ'ըլլայի այդքան ճիշդ նախապատեան համբերելու և լուրս համար . . . ։ Եւ սակայն նոյն միջոցին իւր ընկերն ինչ ընկուէր ։ իրեն աւելի տարեքոտ և ըստ ինքեան ասելի խոհանար կարծուած և « վարժարանին սրբութեան երաշխաւոր անձ մը » միթէ պէ՞տք էր որ յարկակէր վրաս ։ օճիքէս

* Արդարեւ չափազանց վեհերօտ կամ անդալ պիտի լիներ է մէկ որ կարող լինի այդպիսի յանդուգն թշնամեաց լուրս թեմք հանդուրժել ։ Մ. Ի.

քաջկռտելով դուրս հանէր վարժարանէն և հոն զիս ապաւակէր ։ վերջապէս այժե՛տք էր որ այս երկու ձողարարները՝ «որոց պարտականութիւնն է հսկել վարժարանին բարեկարգութեան» զիս այնքան խոշտանդէին որ ես ստիպուէի իրենց ձերաններէն հողապրելու համար՝ աղաղակ բառաւ ։ մինչ զի աշակերտահիք տեսնելով որ իրենց դասատուն մարտիւրոսի մը նման կը քաջըջեն ։ ի զթոյ և յերկիւղէ ըմբռնեալ լեղապատառ փախին աղաղակել . . . ։ Փառք տալու է Աստուծոյ որ անոնցմէ ոմանք յերկիւղէ չը հիւսնացան ։ զի չգիտեմ թէ ան տեսնին ինչ պատասխան պիտի տային յիշեալ մեր Հողարարձու անոնց ծնողոց ։

Արդ կ'եզրակացնեմ խօսքս կրկնելով թէ այս երկու անձինքը չկարծեն երբէք թէ իրենց երբեակ յանցանքը ։ զիս խնդանանքին ։ զիս աստակներին և տեղաջը վախճանին ։ կ'արդարաւանս կամ կը մեղմանան՝ անոնցմէ միոյն իմ արդար բարեկեցական մէջ օրիկայս՝ տիտղոսը տալու համար ։

Ես վստահ եմ իմ դատարար վրայ և սիրտի չգաղղիմ արդարութիւն պահանջել ։ մեծ և որ ինձ հատուցուի ։

1 յունիս 1879 Մասիս
Իսկիւտար խորին յարգանք
Մ. Իճէմ

Ա.Զ.Գ.

Պատրիարքական փոխանորդ Գեր. Տ. Մատթէոս Սրբազան եպիսկոպոս իսկիւրեան ։ յառաջիկայ կիւրակէ օր յունիս 3 հանդիսաւոր Ս. Պատարագ մատուցանելով փահանայական ձեռնադրութիւն պիտի կատարէ ի Մայր Եկեղեցւոյ ։

Արդ՝ թաղ խորհուրդս պարտք կը համարի սոյն ծանուցանելի գիտութիւն բարեպաշտ Աղգայնոց ։

1 յունիս 1879
Թաղ խորհրդարան (Կիւս)
Մայր Եկեղեցւոյ

Ա.Զ.Գ.

Մասիս լրագրոյ 1876 տարւոյն մայիս 20 և 22 թիւերը պէտք ըլլալով սոյն թիւերէն Մասիսի խմբագրատունը բերողին՝ իւրաքանչիւր թուոյ համար 5 դրձ արծաթ ։ կամ Մասիսի նոր թիւերէն մէկ մէկ շաբաթուան թիւ պիտի տրուի ։

Պրեմիան Պատրիարքին

ՆԵՐԿԱՅ ՀԱՅԵՐԵՆԻ ԱՊՍՏՈՍՈՍ ՎԻՃԱԿԸ
Այս ընտիր գրքոյը ամեն բանասէր Հայոց հետաքրքրութիւնը իրաւամբ գրաւած է ։ կը ծախուի ամեն Հայ դրամաւաւայ նաեւ լրագրաց ցրուիչներու ձեռքով ։ Գին 2 դրձ ։

ԲՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՆՈՒՄԻ
ՀՐԱՇԱՒԻ ՏԵՍԱՐԱՆՆԵՐ

Ի նպատակ Մատթէոսի վարժարանի Պեշեմաշէ
1879 յունիս 2 ԾԲ. գիւր ժամ 1 1/2 ին
Վերջիւեալ վարժարանին սրահին մէջ պիտի ներկայացուին հաշակաւոր Խորհրդին նորահնար գիւտերը ։ հանդերձ լազատութեամբ և փորձակութեամբ ։

Նախ ֆոնօկրաֆի կամ Զայնալի ։ այն է խօսուն մեքենայ ։ որ ամեն լեզուաւ կը բանակցի ։

Երկրորդ՝ Թէյէֆօն կամ Հեռախօս ։ նորոգ կատարելագործեալ աւեսակէն ։

Երրորդ՝ Ելեքտրական գրիչ ։

Ի վերջոյ Մոդական լազտերի ըսքանչիւր փորձը պիտի կատարուի Ամերիկայի նշանաւոր տեղւոյնքը ներկայացնելով ։

Թուաւոր նատարանք 3 Կ. Մեքենա
Վերջապէս 1/2 Մեքենա ։

Սնունդահոս օճառ, մորթը կը կակուղցնէ ու ընդիջուրով ալ կը փրփրի, տեսալը ինտա աղնիւ ու գինը շատ աժան է . կը ծախուի կ. Պօլիս Դալաթիա Սինաստան և ընկերաց Ամերիկա . լի Էջգագանա